

ԴԱՍ 14. 8-9 ԳԼՈՒԽՆԵՐ — ՅՈԹ ՓՈՂԵՐԸ

- 1) Ու երբ բացեց յոթերորդ կնիքը, մոտ կես ժամով լռություն տիրեց երկնքում:
- 2) Եվ տեսա այն յոթ հրեշտակներին, որ Աստծո առաջ էին կանգնած, ու նրանց **յոթ փող** տրվեց:

«...**յոթ հրեշտակներ**...»: **Ել. 20:11** - « Որովհետև Եհովան վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծոփս ու այն ամենը, **ինչ դրանց մէջ է**, իսկ եօթներորդ օրը հանգստացավ: Դրա համար էլ Տէրն օրհնեց եօթներորդ օրը եւ այն սուրբ հոչակեց:»

«...**յոթ փողերը**...»: Աստծո փողերը հնչում էին, երբ օրենքն էր տրվում (Ել. 19:16-19): Յոթ փողերը Երիքովի մոտ (Հեսու 6:13-16): Մի՛ շփոթեք դատաստանի յոթ փողերը Ա կորն. 15:52-ի «վերջին փողի» հետ: Փողեր լինելու են Հազարամյակի ժամանակ:

Չեսուի գիրքը, համեմատած Չայտնության հետ

- «Հեսուն ժողովրդին հրամայեց՝ ասելով. «Մի՛ աղաղակեք, ձեր ձայնը թող չլսվի, ու ձեր բերանից ոչ մի խոսք թող դուրս չգա՛, մինչև այն օրը, որ ես ձեզ ասեմ. «Աղաղակե՛ք»: Այն ժամանակ աղաղակեցե՛ք» Հեսու 6:10:

Ո՞վ էր իրականում պատերազմում Երիքովի կովի ժամանակ: _____
(Հեսու 5:13-15):

Չեսու 5:13-15 - ¹³ Եւ երբոր Հեսուն Երիքով էր, իր աչքերը բարձրացրեց եւ տեսավ, որ ահա իր դիմացը մէկ մարդ էր կանգնել, եւ նորա ձեռքին մի մերկ սուր. եւ Հեսուն նորան մօտեցավ եւ նորան ասեց . Մեզանի՞ց ես դու, թէ մեր թշնամիներից. ¹⁴ Եւ նա ասեց. Ոչ, այլ ես Տիրոջ զօրավարն եմ, եւ հիմա եկա: Եւ Հեսուն իր երեսի վերա գետինն ընկավ եւ երկրպագություն արավ, եւ նորան ասեց. Ի՞նչ է հրամայում իմ Տէրն իր ծառային: ¹⁵ Եւ Տիրոջ զօրավարը Հեսուին ասեց. Ոտքերիցդ կօշիկներդ հանիր, որովհետև քո կանգնած տեղը սուրբ է. Եւ Հեսուն այնպէս արավ:

- Նա Հորդանանն անցավ Նիսան ամսվա 10-ին, թլպատությունը Նիսան ամսվա 14-ին:
- Հիսուսի փառավոր մուտքը Երուսաղեմ, Նիսան ամսվա 10-ին, խաչելիությունը՝ Նիսան ամսվա 14-ին:

- Ինչու են ուղարկվում «երկու վկաները (լրտեսները)»: Հաստատ ոչ թե ռազմական հմտությամբ այս պատերազմի ծրագիրը մշակելու համար... փրկելու մի հեթանոս կնոջ: Նշանդրեքին նախորդում է լռությունը (Հայտ. 8:1):

Չորեկյան տարի

- Սկսվում է Հեսուի հաղթարշավից հետո
- Բոլոր պարտքերը ներվում են
- Հողը վերադառնում է իր օրինական տերերին
- Ստրուկներն ազատ են արձակվում

3) Եվ մի ուրիշ հրեշտակ եկավ և կանգնեց զոհասեղանի առջև, որ ուներ մի ոսկյա խնկաման, և նրան շատ խունկ տրվեց, որպեսզի **բոլոր սրբերի** աղոթքների հետ գահի առջև գտնվող ոսկե **զոհասեղանին** մատուցի:

4) Եվ հրեշտակի ձեռքից խնկի ծուխը, սրբերի աղոթքների հետ մեկտեղ, Աստծո առաջ ելավ:

«**Բոլոր սուրբերը**». ոչ մեկը չի կորել (Հովհ. 6:37-40, 17:12, Եբր. 10:26-31):

«**Չոհասեղան**». խորանն ու տաճարը երկնային ճշմարիտ զոհասեղանի լոկ խորհրդապատկերներն են (Եբր. 9:24):

²⁴ Քանզի Քրիստոս ոչ թե ճշմարտության օրինակ եղող ձեռակերտ սրբարանը մտավ, այլ՝ բուն իսկ երկինքը, որպեսզի մեզ համար ներկայանա Աստծու առաջ:

Ել. 30:34 - 34 Եւ Եհովան ասեց Մովսէսին. Առ քեզ համար անուշահոտ համեմներ, այսինքն ստաշխ ու եղունգ եւ քաղբան, այս անուշահոտ համեմները եւ մաքուր կնդրուկ. ամենը հավասար կշռով լինին: (Մատ. 2:11, Եբր. 4:14-16)

Ադամը, Նոյը, Աբրահամը, Դավիթը և Պողոսն աղոթել են այս աղոթքը. «Թող Քո թագավորությունը գա, թող Քո կամքը լինի»: Իրոք. «Սաղմ. 7, 26, 35, 52, 55, 58...): Աղոթքի նպատակն այն չէ, որ մարդու կամքը կատարվի երկնքում, այլ Աստծո կամքը՝ երկրի վրա:

5) Ու հրեշտակը վերցրեց խնկամանն ու լցրեց այն զոհասեղանի կրակով և զցեց երկրի վրա, ու ձայներ, որոտուժներ ու փայլակներ եղան, և երկրաշարժ:

Ղուկ. 12:49-51 - ⁴⁹ «Երկրի վրա կրակ գցելու եկա. եւ ինչքա՛ն եմ կամենում, որ արդէն իսկ բորբոքուած լինի: ⁵⁰ Եւ մի մկրտություն ունեմ մկրտուելու եւ ինչպե՛ս եմ շտապում, որ կատարուի: ⁵¹ Կարծում էք, թէ երկրին խաղաղութի՞ն տալու եկա. ո՛չ, ասում եմ ձեզ, այլ՝ բաժանում: (Ես. 6:5-7):

6) Եվ յոթ հրեշտակները, որ յոթ փողեր ունեին, պատրաստվեցին հնչեցնելու:

7) **Առաջին հրեշտակը** հնչեցրեց փողը, ու եղավ **Կարկուտ** ու արյունախառն կրակ ու գցվեց երկրի վրա. **երկրի մեկ երրորդ** մասն այրվեց, և այրվեց **ծառերի մեկ երրորդ մասը**, ու այրվեց ամբողջ կանաչ խոտը:

«**Կարկուտ**» = միշտ օգտագործվում է դատաստանի համար (Ես. 28:2, Հոբ 38:22,23: Եզիպտոսում. Ել. 9:23-258): Համեմատիք նաև Եզիպտոսի հանդեպ 7-րդ պատժի հետ (Ել. 9:18-26, Հովել 2:30):

«**Ծառեր**» = հունարեն բառը՝ = «պտղատու ծառ»:

8) **Ու երկրորդ հրեշտակը** փող հնչեցրեց, և **կարծես** թե կրակով բորբոքված մի լեռ ծովը գցվեց, ու **ծովի մեկ երրորդ** մասն արյան վերածվեց: 9) Եվ ծովում եղած արարածների մեկ երրորդ մասը, ինչ կենդանի շունչ կար, ոչնչացավ, և նավերի մեկ երրորդ մասը կործանվեց:

Եզիպտոսի առաջին պատիժը (Ել. 7:19-21, Սաղմ. 105:29, Եր. 51:25, Մաթ. 21:21): Երկրի մակերեսի 3/4-ից ավելին ջուր է: Գրանցված են ավելի քան 25.000 օկիանոսային առևտրական նավեր: Օվս. 4:3, Ջաք. 1:13, Ես. 2:16:

10) Փող հնչեցրեց **երրորդ հրեշտակը**, ու **երկնքից** ջահի պես վառվող մի **մեծ աստղ ընկավ** և ընկավ գետերի մեկ երրորդի ու ջրի ակունքների վրա: 11) Եվ այդ աստղի անունն Օշինդր էր (wormwood). և ջրերի մեկ երրորդ մասն օշինդր դարձավ, և շատ մարդիկ այդ ջրերից մեռան, քանի որ դառն էին:

Ազգային աշխարհագրական ընկերությունը հաշվում է մոտ 100 հիմնական գետեր: ԱՄՆ-ի Աշխրահագրական հետազոտությունը՝ 30 մեծ գետեր ԱՄՆ-ում:

Բառացի. Ել. 15:23,25, Եր. 9:14-15, 23:15, 2 Օր. 29:18:

2 Օր. 29:18 - ¹⁸ Ձեր մեջ թող չգտնուի տղամարդ կամ կին, ազգ կամ ցեղ, որի միտքը իր Տէր Աստծուց շեղուած լինելով՝ գնայ ու պաշտի այդ ազգերի կուռքերը: Ձեր մեջ ոչ մէկը բուսած դառն ու դաժան արմատ չլինի:

Եբր. 12:15 - 15 Զգոյշ կացեք, որ մէկը յետ ժամանակ չլինի Աստուծոյ շնորհքիցը. որ մի դառն արմատ վեր չբուսնէ եւ նեղութիւն տայ, եւ նորանով շատերը պղծուին:

Մատ. 27:34 - 34 Նորան լեղիի հետ խառնած գինի տուին խմելու. եւ երբոր ճաշակեց, չէր կամենում խմել:

Ղուկ. 21:11 - 11 Եւ մեծամեծ երկրաշարժներ եւ տեղ տեղ սովեր եւ մահտարածաժամեր կ'ընին. եւ երկնքիցն ահավոր բաներ եւ մեծամեծ նշաններ կ'ընին:

Մատ. 24:29 - 29 Եւ շուտով այն նեղութեան օրերից հետո արեգակը կ'իսավարի, եւ լուսինն իր լոյսը չի տա. եւ աստղերը երկնքից վայր կընկնեն, եւ երկնքի զօրութիւնները կշարժվեն:

23 Եւ եկան Մեռա, եւ չէին կարողանում խմել Մեռայի ջրերից, որովհետեւ դառն էին, վասն որո նորա անունը Մեռա կոչուեցավ: 25 Եւ նա Եհովային աղաղակեց. եւ Եհովան նորան մի փայտ ցոյց տվեց, եւ նա զցեց ջրերի մէջ, եւ ջրերը անուշացան:

«Երկնքից աստղ ընկավ»:

- Սատանայի մասին ուսմունքը (Ես. 14, Եզեկ. 28)
 - 54 անգամ Աստվածաշնչում, 36 անգամ Նոր Կտակարանում, 7 անգամ Հայտնությունում
 - Անդունդի հրեշտակը:
- Բանտարկվել է այնտեղ.
 - Ընկած. Ես. 14:12, Ղուկ. 10:18, Հայտ. 8:10

Ես. 14:12 - 12 Ի՛նչպէս վայր ընկար երկնքից, ով առավօտը ծագող Արուսեակ. Կտրուեցի՛ր՝ գետինն ընկար, ով ազգեր նկուն անողոյ: (Կարդա Ես. 14:12-18)

- Կկորցնի մուտքը երկինք. Հայտ. 12:7-12, Հոբ 1:6-12


- Դները չար ոգիներ են, նրանք միշտ աշխատում են մարմնավորվել, դատապարտված են տանջանքի (Մաթ. 8:29, 25:41), պետք է ենթարկվեն Քրիստոսին (Մարկ. 1:23-27, 5:1-15, Ա Հովհ. 4:4):

12) Եվ **չորրորդ հրեշտակը** հնչեցրեց փողը, ու արևի մեկ երրորդ մասը ու լուսնի մեկ երրորդ մասը ու աստղերի մեկ երրորդ մասը զարկվեցին, այնպէս որ նրանց մեկ երրորդ մասը խավարեց, և օրվա մեկ երրորդ մասն անլույս եղավ, ինչպէս նաև՝ գիշերվանը:

Եգիպտոսի իններորդ պատիժը. Ել 10:21-23 (3 օր), Ամովս 5:18, Հայտ. 16:8-9, Մաթ. 24:29-30, Ղուկ. 21:25-28: Ղուկ. 21:25,26. «Երկնքի գորությունները կշարժվեն» = ouranos («ուրանիում»), dunamis («dinamit»). Եբր. 12:26-28, Ես. 30:26, Հովել 2:1-2. «Խավար»:

Չամաշխարհային պատիժ: Ղուկ. 21:25-26 - ²⁵ Եւ նշաններ կ'լինին արեգակումը եւ լուսնումը եւ աստղերումը, եւ երկրի վերայ հեթանոսները խռովութեամբ կ'տագնապին, ծովը կ'գոչէ եւ կ'ծփան ալիքները: ²⁶ Որովհետեւ մարդկանց սրտերը կ'նուաղին վախից եւ այն բաների սպասելուցն, որ բոլոր աշխարհքի վերայ պիտի գան. որովհետեւ երկնքի գորութիւնները կ'շարժուին:

Մատ. 24:29-30 - ²⁹ Եւ շուտով այն նեղության օրերից հետո արեգակը կ'խավարի, եւ լուսինն իր լոյսը չի տա. եւ աստղերը երկնքից վայր կ'ընկնեն, եւ երկնքի գորությունները կշարժվեն: ³⁰ Եւ այն ժամանակ կերեվա մարդու Որդու նշանը երկնքում, եւ այն ժամանակ կոծ կանեն երկրի բոլոր ազգերը. եւ կտեսնեն մարդի Որդիու գալիս երկնքի ամպերի վրա գորությունով եւ շատ փառքով:



(1-ին չորսը «բնական են». Մյուս երկուսը «դիվային» են...)

- 1-ին փողը. ուղղված է երկրին, ծառերի, խոտի 1/3-ը մահանում են:
- 2-րդ փողը. ուղղված է ծովին, ձկների, նավերի 1/3-ը ոչնչանում են:
- 3-րդ փողը. ուղղված է ջրերին. 1/3 մասը մահանում է: «Օշինդր» անունով: աստղը:
- 4-րդ փողը. ուղղված է արևին, լուսնին, աստղերին. երկնքի 1/3-ը խավարեց:

Վերջին 3 փողերը նաև կոչվում են «**3 վայեր**» (Գլուխ 9-ը): Թվում է, «լոգարիթմիկ, logarithmic» ընթացք կա տարբեր դատաստանների միջև.
կնիքներ (զլ. 6), **փողեր** (զլ. 8 և 9) և **թասեր** (զլ. 15 և 16):

13) Եվ նայեցի ու երկնքում թռչող մի հրեշտակի ձայն լսեցի, որ բարձրաձայն գոչում էր. «Վա՛յ, վա՛յ, վա՛յ **երկրի վրա բնակվողներին՝** այն մասցած փողերի ձայնի համար, որ երեք հրեշտակներն են հնչեցնելու»:

Aietos = արծիվ (Հայտ. 12:14, Մաթ. 24:28, Ղուկ. 17:37):

«**Երկրի բնակիչներ**» (12 անգամ). Հայտ. 3:10, 6:10, 8:13, 11:10, 12:12, 13:8, 12, 14, 14:6, 17:2, 8: (Ի հակառակ երկնքի քաղաքացիների. Փիլ. 3:18-21): Երկրի բնակիչները վերստին ծնված չեն. Հայտ. 13:8:

Փիլիպ. 3:20 - 20 Բայց մեր քաղաքականությունը երկնքում է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տեր Յիսուս Քրիստոսին.

Հայտնություն 9

Երկու դիվային բանակներ

(Հովել 2:1-9, 15, 28, 3:2, 9-16, Բ Պետ. 3:10 և այլն): Գերբնական բանակները նախապես հայտնվել էին Սուրբ Գրքում.

- Հրեղեն ձիերը և կառքը Եղիային բաժանեցին Եիսեյից, երբ Եղիան երկինք վերցվեց (Բ Թագ. 2:11):
- Երբ Դոթայիմը պաշարվեց Սիրայի բանակի կողմից, Աստված բացեց Եղիսեյի ծառայի աչքերը, և նա տեսավ հրեղեն ձիեր և կառքեր (Բ Թագ. 6:13-17): (Տեր Հիսուս Քրիստոսին նույնպես կուղեկցեն սպիտակ ձիերի վրա հեծած երկնային զորքերը):

1) Եվ **հինգերորդ հրեշտակը** հնչեցրեց փողը, ու տեսա, որ երկնքից մի **աստղ** ընկավ երկրի վրա, ու անդունդի գուրի բանալին տրվեց **նրան**: 2) Ու **նա անդունդի** գուրը բացեց, ու այդ վիհից **ծուխ** էլնում, ինչպես մի մեծ հնոցի ծուխ, ու արևն ու օդը խավարեց վիհի ծխից: 3) Եվ ծխից մորեխներ դուրս եկան երկրի վրա, ու նրանց զորություն տրվեց՝ երկրի կարիճների ունեցած զորության պես:

«**Աստղ**». արդեն ընկած: Աստղ = հրեշտակ: Դան. 12:3, Ես. 14:12-16:

«**Նրան**» (անձնավորություն). մի բանալի է տրվում, անդունդի արարձների թագավորը (հ. 11): Իշխանությունն ամբողջական չէ. նրան պետք է բանալի

տրվեր: (Սատանան երևում է որպես երկնքից ընկնող կայծակ. Ղուկ. 10:18, Եսային մարգարեացել էր (14:12):

Անդունդ. «անհատակ փոս». 9 անգամ ՆԿ-ում, 30 անգամ ՀԿ-ում, 7 անգամ Հայտնությունում ((9:1,2,11, 11:7, 17:8, 20:1,3): Մեղք գործած հրեշտակները (Ծննդ. 6:2,4, Բ Պետ. 2:4, Հուդա 6): Դներն աղաչում են, որ անդունդ չգնան (Ղուկ. 8:31), «շատ օրեր» անց, այնտեղ են հավաքվելու (Ես. 24:21,22), սատանան բանտարկվելու է այնտեղ (Հայտ. 20:10): «Ծուխ». Սողոմ և Գոմոր (Ծննդ. 19:28), Օրենքի տրվելը (Ել. 19:18):

Չոր 26:6 - 6 Մերկ է դժոխքը Նորա առաջին, եւ կորուստը ծածկոց չունի:

2 Պետ. 2:4 - 4 Որովհետեւ եթէ Աստուած այն հրեշտակներին, որ մեղանչեցին, չ'խնայեց, այլ խաւարի կապանքովը տարտարոսը գցած դատաստանի համար պահել տուաւ.

4) Եվ նրանց **հրամայվեց**, որ վասա չտան երկրի խոտին, կամ որևէ կանաչության և ոչ էլ որևէ ծառի, այլ միայն այն մարդկանց, ովքեր իրենց **ձակատների վրա Աստծո կնիքը չունեն**: 5) Եվ հրաման տրվեց, որ չսպանեն նրանց, այլ չարչարեն **հինգ ամիս**: Ու նրանց տված չարչարանքը կարիճի պատճառած չարչարանքին էր նման, երբ խայթում է մարդուն: 6) Եվ այդ օրերին մարդիկ մահ են փնտրելու, բայց չեն գտնելու, պիտի ցանկանան մեռնել, և մահը նրանցից փախչելու է:

Աստծո կնքածները: Նա գիտի Իրեններին (Բ Տիմ. 2:19):

19 Բայց Աստծու հաստատուն հիմքը կանգուն է փսում եւ ունի այս կնիքը, թէ՛ «Տէրը ճանաչեց նրանց, որ իրն են». նաեւ՝ «Անիրաւությունից հեռու լինի ամենայն ոք, ով կրում է Տիրոջ անունը»:

5 ամիս տանջանքներ: 150 օր. Նոյի ջրհեղեղը (Ծննդ. 7:24):

«**Կարիճները**». Ես. 9:15. «մարգարեն, որ ստություն է սովորեցնում, պոչն է» (Հովել 2:2,4, Եփ. 6:12):

7) Եվ մորեխները նման էին պատերազմի պատրաստ ձիերի, ու նրանց գլուխների վրա ասես ոսկեղեն պսակներ կային, և նրանց երեսները մարդկային երեսների էին նման: 8) Եվ նրանք կանացի մազերի նման մազեր ունեին, և նրանց ատաճներն **առյուծի ժանիքների** էին նման: 9) Եվ նրանք երկաթե

գրահների պես գրահներ ունեին, և նրանց թևերի ձայնը նման էր պատերազմի արշավող բազմաթիվ ձիեր լծաց ռազմակառքերի ձայնին:

«Առյուծի ժանիքներ». Հովել 1:6: Նույնիսկ սովորական մորեխների ձայնը վախենալու է: Մակայն սրանք դիվային արարածներ են...

10) Եվ կարիճների նման պոչեր ունեին ու պոչերի վրա խայթ և հինգ ամիս մարդկանց փաստելու իշխանություն ունեին: 11) Եվ իրենց վրա թագավոր ունեին՝ **անդունդի հրեշտակը**, որի անունը եբրայերեն Աբադդոն է, իսկ հունարեն՝ Ապոդիոն:

Աբադդոն (Եբրայերեն), Ապոդիոն (հունարեն): Աբադդոն. 6 անգամ ՀԿ-ում (Հոր 26:6, 28:22, 31:12, Սաղմ. 88:11, Առակ. 15:11 27:30): Ապոդիոն.

«կործանող», Հովհ. 10:10: «**բանտի իշխան**». Եփ. 2:2, Հովհ 14:30, Ես. 14:15:

Ղուկ. 8:31 - 31 Եւ աղաչում էին նորան, որ չ'հրամայէ նորանց գնալ անդունդը:

1 Պետ. 3:19 - 19 Որով գնաց բանտում եղող հոգիներին էլ քարոզեց:

12) Անցավ «վայերից» մեկը, որից հետո, ահա, էլի երկու «վայեր» են գալիս:

«Մորեխները, որ թագավոր չունեն, սակայն բոլորը գունդ-գունդ կազմած են դուրս գալիս» (Առ. 30:27):

«Ինձ այսպես ցույց տվեց Տեր Աստված. ահավասիկ Նա մորեխների մի պարս կազմեց վերջին աճի սկզբում. և ահա, դա վերջին խոտն է (**Գոգի**) թագավորի հունձքից առաջ» (Ամովս 7:1):

Մա խորհրդապատկերում է «**Գոգին**» (Եզեկիել 38): Ավելի ուշ, կրկնվում է Հայտնություն 20:8-ում:

13) Եվ **վեցերորդ հրեշտակը** հնչեցրեց փողը, և Աստծո առջև գտնվող ոսկե գոհասեղանի չորս եղջուրներից մի ձայն լսեցի: 14) Որ ասում էր փող ունեցող վեցերորդ հրեշտակին. «Արձակի՛ր **Եփրատ** մեծ գետի վրա կապված չորս հրեշտակներին»: 15) Եվ արձակվեցին այդ **չորս հրեշտակները**, որ պատրաստված էին ժամվա, օրվա, ամսվա ու տարվա համար, որպեսզի սպանեին մարդկանց մեկ երրորդ մասին:

Մա Հայտ. 8:3-5-ում նկարագրված Խունկի գոհասեղանն է: Արյան Վրեժխնդիրը մոտ էր պատասխանելու այդ աղոթքներին:

«...չորս հրեշտակներ...». չորսը, կարծես, ստեղծագործության թիվն է: Մա, միգուցե, այն պատճառով է, որ մենք գիտենք տիեզերքի 10 չափողականություններից միայն 4-ը: Մրանք, բացահայտ է, որ չար հրեշտակներ են, քանի որ կապված են և պետք է արձակվեն: Քանի որ 1/4-ն արդեն սպանվել էր (Հայտ. 6:8), նշանակում է, որ 6-րդ փողի հնչյունն ավարտվելու ժամանակ երկրի բնակչության կեսից ավելին մահացած կլինի:

Եփրատ


Եփրատ գետը Իսրայելի արևելյան սահմանն է (Մննդ. 15:18, Բ Օր. 1:7, Հեառ 1:4, Ա Թագ. 4:21,24): Նաև, այն արևելքի և արևմուտքի ավանդական սահմանն է, հռոմեացիները ապրում էին մշտական վախի մեջ գետի այն կողմում գտնվող պարսկական կայսրությունից: Այս գետի մասին հիշատակում կա Եդեմի պարտեզում:

Մեղքը սկսվում է այստեղ (Մննդ. 2:14,15, 3:6,7), առաջին սպանությունը (Մննդ. 4:8), Նեբրովթը «կապստամբի» (Մննդ. 10,11), Բաբելոնի աշտարակը = Բաբելոն. կռապաշտության և կեղծ պաշտամունքի հիմքը:

The Boundaries of Ararat/Urartu

Urartu included about 500,000 square kilometers (193,000 square miles).

Այսօր: 11,484 mi, Ուրարտուն բաժանված է.



16) Եվ ձիավոր գորքերի թիվը երկու բյուր բյուրավոր էր. ու լսեցի նրանց թիվը:
17) Եվ տեսիլքի մեջ այսպես տեսա ձիերին ու նրանց հեծյալներին, որ ունեին հրեղեն, հակինթե ու ծծումբե զրահներ, և ձիերի գլուխներն առյուծների գլուխների էին նման, ու նրանց բերաններից կրակ, ծուխ ու ծծումբ էր ելնում:

200-միլիոնանոց մարդկանց քանակ: Դիվային «բանակ» Հեռավոր Արևելքի՞ց: (Չինաստանի ահռելի չափերի հասնող բնակչությունը դրա ամենահզոր զենքն է: Ռուսաստանը վախենում է աճող իմիգրացիայից, որ վտանգում է նրա արևելյան սահմանները): Գույները ճիշտ այնքան ահավոր են, ինչպես որ այդ արարածներն են անբնական. հրե կարմիր, մուգ կապույտ, պայծառ դեղին: Եթե դուք հավատում եք, դուք դժվար թե մեկնաբանության կարիք ունենաք: Այս հատվածի դժվարություններն առաջանում են հավատի պակասի պատճառով: Դիվային ուժեր են գործում այստեղ:

18) Եվ երեք միջոցով մարդկանց մեկ երրորդ մասը մահացավ. այսինքն՝ այն կրակից, ծխից ու ծծումբից, որ ելնում էր նրանց բերաններից: 19) Որովհետև նրանց գորությունն իրենց բերանների ու պոչերի մեջ է, քանի որ նրանց պոչերը օձերի նման էին և գլուխներ ունեին, որոնցով ժսաս էին հասցնում: 20) Եվ այն մարդիկ, որ չսպանվեցին այս հարվածներից, չապաշխարեցին իրենց ձեռքի գործերից, որ այլևս չերկրպագեն դներին, ոսկուց, արծաթից, պղնձից, քարից ու փայտից շինված կուռքերին, որոնք ո՛չ կարող են տեսնել, ո՛չ լսել և ո՛չ էլ քայլել: 21) Ո՛չ էլ ապաշխարեցին իրենց գործած մարդասպանություններից, ո՛չ էլ կախադրություններից, ո՛չ էլ պոռնկություններից և ո՛չ էլ իրենց գողություններից:

Այս դատաստանները ամոքիչ չեն, այլ հատուցող են: Մարդիկ համառորեն չփում են իրենց մեղքերի մեջ: «Մեկը չկա, որ հասկանում է, մեկը չկա, որ Աստծուն է փնտրում» (Հռոմ. 3:11): Մա դիվային պաշտամունք է (Ա Կորն. 10:19-21): Չեղած աստվածներին երկրպագելու և գոյություն ունեցող դներին երկրպագելու անխելքությունը:

Կուռքեր կարող են լինել իրենց ձեռքի գործերը, կառույցները, մեքենաները, քաղաքները և այլն:

Մեռած մեղավորները երկրպագում են մեռած աստվածներին (Մաղմ. 115):

Մենք նմանվում ենք նրան, ինչին հավատում ու պաշտում ենք (Մաղմ. 135:18):


Եզիպտոսի պատիժները

- Զգուշացում #1 — 1) Զրերը արյուն են դառնում. 7:14-25
- Զգուշացում #2 — 2) Գորտերը երկրում և տներում. 8:1-5
- Ոչ մի զգուշացում — 3) Մժեղներ մարդկանց վրա. 8:10-19
- Զգուշացում #3 — 4) Շնաճանճ տներում. 8:20-24
- Զգուշացում #4 — 5) Հիվանդություններ անասունների վրա. 9:1-7
- Ոչ մի զգուշացում — 6) Թարախապալարներ. Մարդկանց և կենդանիների վրա. 9:8-12
- Զգուշացում #5 — 7) Որոտ, կարկուտ. 9:18-35
- Զգուշացում #6 — 8) Մորեխներ. 10:1-20
- Ոչ մի զգուշացում — 9) Խավար. (3 օր) — 10:21-29
- Զգուշացում #7 — 10) Առաջնեկներ. մարդկանց և անասունների. 11 և 12 գլ.

Փարավոն. «Մեղք գործեցի». Ել. 4:22, Իսրայել = «առաջնեկ»:

Դատաստան ընդդեմ նրանց պաշտած աստվածների (ԹՎ. 33:4, Դատ. 10:14), գործության բացահայտ ցուցադրություն (Ել. 9:16), զգուշացում մյուս ազգերին, Հեսու 2:8,9: Նկատեք, որ կան հրաշքներ նաև թշնամու կողմից. Հայտ. 16:14:

Յոթ փողերի դատաստաններ



Հաջորդ դաս

- Կարդա 10 և 11 գլուխները
- Ովքեր են երկու վկաները: Քո պատասխանը հիմնավորիր Սուրբ Գրքի համար(ներ)ով

Ինչու՞ գրի չեն առնվել յոթ որոտումները